



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » օգոստոս 2025 թվականի N 1899 Ա
ԱՆՀԱՏ ԶԵՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 4/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հայկ Առաքելյանի 2025 թվականի օգոստոսի 18-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 18-ին 11881-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հայկ Առաքելյանին Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 4/4 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 18-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հայկ Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. ք. Գյումրի

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոս 2025 թվականի № 1898-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 68.52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ 103.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 12-ի №1708-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. ՆԺԴԵՀԻ փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 68.52 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնական կառուցված ու օրինական ճանաչված 103.79 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գ. ՆԺԴԵՀԻ փողոց, 8/19 ավտոտնակ



ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » օգոստոս 2025 թվականի N 1897

ՔԱՂԱՔԱՑԻ ԲԱՂԴԱՍԱՐ ՀԱԿՈՔԻ ԲԱՂԴԱՍԱՐՈՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ
ՓՈՂՈՑ N263 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 122.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ
ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 213.13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Բաղդասար Հակոբի Բաղդասարովին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N263 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 122.64 (հարյուր քսաներկու ամբողջ վաթսուհորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, (որից 49.76(քառասունինը ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ֆիքսված տեխնիկական անձնագրում) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 213.13 (երկու հարյուր տասներեք ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Բաղդասար Հակոբի Բաղդասարովի լիազորված անձ Հասմիկ Ստեփանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Բաղդասար Հակոբի Բաղդասարովի լիազորված անձ Հասմիկ Ստեփանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N17738 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Բաղդասար Հակոբի Բաղդասարովին (ծնված 1983 թվականի ապրիլի 27-ին) պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N263 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 122.64 (հարյուր քսաներկու ամբողջ վաթսուհորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններից, տեխնիկական անձնագրում ֆիքսված 49.76(քառասունինը ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները, ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Բաղդասար Հակոբի Բաղդասարովի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N263 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 213.13 (երկու հարյուր տասներեք ամբողջ տասներեք հարյուրերորդական) հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:



Handwritten signature

2025-08-26 11:39:05 GMT+4
Հաստատված է ԷԷԵՆԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 26 >> օգոստոս 2025 թվականի N 1896 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՐԱԶԻ ԶԱԴՐՅԱՆԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Անդրանիկ Հրաչի Զադրյանի 2025 թվականի օգոստոսի 25-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի (այսուհետ՝ բաժին) պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Անդրանիկ Հրաչի Զադրյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:
2. Չվճարվող արձակուրդի տևողությունը 3 օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից 3-ը ներառյալ:
3. Չվճարվող արձակուրդի ընթացքում Անդրանիկ Հրաչի Զադրյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել բաժնի պետի տեղակալ Հարություն Ռազմիկի Մխիթարյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Հրաչի Զադրյանին և Հարություն Ռազմիկի Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ք. Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » օգոստոս 2025 թվականի № 1895-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ՓՈՂՈՑ 29 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ
(ՎԿԱՅԱԿԱՆ №14052025-08-0035) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05-Ի №1030-Ա
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի Ստյոպա Միքայելյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11566 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱԶ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Մերկուրովի փողոց 29 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №14052025-08-0035) երեք մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ՝

1) 39.29 քառակուսի մետր մակերեսով շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մերկուրովի փողոց, 29 բնակելի տուն

2) 16.52 քառակուսի մետր մակերեսով շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մերկուրովի փողոց, 29/1 բնակելի տուն

3) 82.06 քառակուսի մետր մակերեսով շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մերկուրովի փողոց, 29/2 բնակելի տուն

2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 05-ի «Գյումրի քաղաք, Մերկուրովի փողոց 29 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №14052025-08-0035) երեք մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №1030-Ա որոշումը:



ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
2025 թ. ք. Գյումրի

2025-08-26 10:07:22 GMT+4
Հասցեագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոս 2025 թվականի №1894-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 89.98 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0355-0022, 08-001-0355-0002-ԻԳ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱԴԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի №4499-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի հարեվանությամբ գտնվող 89.98 քառակուսի մետր մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0355-0022, 08-001-0355-0002-ից) հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Թետչերի փողոց, 1/5 հողամաս

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 09-ի «Թետչերի փողոցի հարեվանությամբ գտնվող 90,0 քմ մակերեսով հողամասը համայնքային սեփականություն գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №4499-Ա որոշումը:



[Signature]

2025/08-26 10:03:54 GMT+4

Հաստատված է էԼԵՆԳ-ի կողմից

miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱԴԵՏ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » օգոստոս 2025 թվականի № 1893-Ա
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Շ. ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ 10 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №12052025-08-0033) ԵՐԵՔ
ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Օնիկ Մուտաֆյանի (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11490 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱԶ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Շ. Ռուսթավելու փողոց 1-ին նրբանցք 10 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №12052025-08-0033) երեք մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.
1) 115.76 քառակուսի մետր մակերեսով շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ռուսթավելու փողոց, 2-րդ նրբանցք, 18 բնակելի տուն
- 2) 133.53 քառակուսի մետր մակերեսով շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Շահումյան փողոց, 71/4 բնակելի տուն
- 3) 41.98 քառակուսի մետր մակերեսով շինություններին և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Շահումյան փողոց, 71/5 բնակելի տուն

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ
2025 թ. ք. Գյումրի



miD

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոս 2025 թվականի №1892-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի №1621-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻՇԱ ՀԱԿՈՔՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով չափազրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՒՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը, քաղաքացի Գրիշա Հակոբյանի լիազորված անձ Ամայա Մարգարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11236 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 04-ի №1621-Ա որոշմամբ քաղաքացի Գրիշա Հակոբյանի սեփականության իրավունքը ճանացված անշարժ գույքին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Յ. Վարդանյան փողոց, 2-րդ շարք, 21/1 շինություն



ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՆԵՏ

2025-08-26 10:08:45 GMT+4
Հղման օրվան է հասնում Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոս 2025 թվականի № 1891-Ա
**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՈՄՍՈՄՈՒԼԻ ՓՈՂՈՑ 9 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №1147087) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աշիկ Մուրադյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11691 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Կոմսոմոլի փողոց 9 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №1147087) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.
 - 1) 205.76 քառակուսի մետր մակերեսով շինությունները և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Վասիլյան փողոց, 9 բնակելի տուն
 - 2) 161.17 քառակուսի մետր մակերեսով շինությունները և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Վասիլյան փողոց, 9/1 բնակելի տուն



ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2024 թվական N 1890-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
Լ.ՄԱՂՈՅԱՆ ՓՈՂՈՑ 33 ՇԵՆՔ N 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ
ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի Լ.Մաղոյան փողոց 33 շենք N 9 հասցեի 58.07 (հիսունութ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 45.47 (քառասունհինգ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սեփական հողամաս և 30.46(երեսուն ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համատեղ սեփական հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի համայնքի Լ.Մաղոյան փողոց 33 շենք N 9 հասցեի 58.07 (հիսունութ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան ու դրա փաստացի զբաղեցրած 45.47 (քառասունհինգ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սեփական հողամասի և 30.46(երեսուն ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համատեղ զբաղեցրած հողամասի նկատմամբ

համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝



[Handwritten signature]

mID

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Քաղաք Գյումրի 2025 թվականի 22-ը օգոստոսի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2025 թվական N 1889-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՅԻ
ԱՐԵՎԻԿ ԱՆԱՍԱՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արևիկ Անաստասի Կարապետյանը (անձնագիր՝ AV 0603686, տրված՝ 2023 թվականի հունվարի 18-ին 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի Շիրակացու 61 գինվորական թաղամաս 19 դոս 2 հասցեում), 2025 թվականի մայիսի 14-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով քաղաք Գյումրի Շիրակացի 61 գինվորական թաղամաս 19 դոս N° 2 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1986 թվականի հուլիսի 18-ի N°15 որոշմամբ Շիրակացի 61 գինվորական թաղամաս 19 դոս N°2 բնակարանը հատկացվել է քաղաքացի Գրիգոր Ժորայի Կարապետյանի 2 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը:

Քաղաքացի՝ Գրիգոր Ժորայի Կարապետյանը մահացել է (հիմք՝ ԱԱ N°199691 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1986 թվականի հուլիսի 18-ի N°15 որոշմամբ տրված N° 19 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 8-ի N° 250162016142, 2025 թվականի ապրիլի 8-ի «Գյումրի Կենտրոն» համատիրության տեղեկանքները, Արևիկ Անաստասի Կարապետյանի, Ժորա Գրիգորի Կարապետյանի անձնագրերի պատճենները, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2025 թվականի ապրիլի 21-ի եզրակացությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղակա ղեկավարի ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N° 1-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի մայիսի 14-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լուծմանի օր է նշանակվել 2025 թվականի օգոստոսի 12-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լուծման օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Արևիկ Անաստասի Կարապետյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Քաղաք Գյումրի Շիրակացի 61 գ/ա 19 դոս N2 հասցեի 47.21 (քառասունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ 1147250 վկայական) :

բ) Գյումրի քաղաքի Շիրակացի 61 գ/ա 19 դոս N2 հասցեի բնակարանը 1986 թվականի հուլիսի 18-ից թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1986 թվականի հուլիսի 18-ի N15 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Անանիա Շիրակացու 61-րդ թաղամաս դոս 19 N2 հասցեում հաշվառված է 6 անձ, բնակվում են՝ Արևիկ Անաստասի Կարապետյանը 1986 թվականից, Ժորա Գրիգորի Կարապետյանը 2010 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ N 250162016142 տեղեկանք և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի ապրիլի 8-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի՝ Արևիկ Անաստասի Կարապետյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998 թվականի մարտի 1-ից այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կառավարվող վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 10-ի N US-10042025-99-0214 տեղեկանքներ):

ե) Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց 61 գինվորական թաղամաս 19 դոս N2 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակում բավարար, այն է՝ պահանջվում է կատարել շենքի հարդարանքի նորոգում՝ վնասված տարրերի փոխարինումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2025 թվականի ապրիլի 21-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի՝ Արևիկ Անաստասի Կարապետյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Շիրակացի գինվորական թաղամաս 19 դոս N2 հասցեի բնակարանը վարձակալել է 1986 թվականի հուլիսի 18-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2006 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալված բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններում բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասությամբ շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու:

տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելի հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականություն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանու և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և ոչ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքը օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ ոչ առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններ օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2016 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետի նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալներին՝ բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալ բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվող Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավման ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի՝ Արմենակ Անաստասի Կարապետյանի դիմումը բավարարեց:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի, 55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաք Գյումրի Շիրակացի 61 գ/ա 19 դոս N2 հասցեի 47.21 (քառասունյոթ ամբողջ քառասուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Արևիկ Անաստասի Կարապետյանին

ծնված՝ 1964 թվականին

որպես սեփականություն :

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահվում է քաղաքացի՝ Արևիկ Անաստասի Կարապետյանին :

3. Քաղաքացի՝ Արևիկ Անաստասի Կարապետյանին եռօրյա ժամկետում իրազեկել և ստորագրել վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արևիկ Անաստասի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչակա նակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝



2025-08-25 12:37:05 GMT+4

Հաստատված է ԷԿԵՆԳԻ կողմից



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թվական քաղաք Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2025 թվականի N 1888

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ
ՓՈՂՈՑ N113 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.02
ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ)
ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սերգեյ Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաքի Մայակովսկոյ փողոց N113 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 27.02(քսանյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, (որից 23.09(քսաներեք ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ֆիքսված տեխնիկական անձնագրում), ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ:

Քաղաքացի Սերգեյ Հարությունյանի լիազորված անձ Սոս Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Սերգեյ Հարությունյանի լիազորված անձ Սոս Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականին N6252 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սերգեյ Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաքի Մայակովսկոյ փողոց N113 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 27.02(քսանյոթ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններից տեխնիկական անձնագրում ֆիքսված 23.09(քսաներեք ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3206(երեք հազար երկու հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2025 թվականի N 1887-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 9 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ՁԵՌՔԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 24 մանկապարտեզների համար «Հակահրդեհային սարքերի տեղադրման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմավորել.

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Կոլյա Հարությունյան – Գյումրու համայնքի ղեկավարի օգնական,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Կարեն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Աստղիկ Խաժակյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



2025թ. ք. Գյումրի

ՈՍԺ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2025 թվականի N 1886-Ա,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 9 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ԶԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 24 մանկապարտեզների «Հակահրդեհային սարքերի տեղադրման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3) Արմինե Ներսիսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

4) Անահիտ Խաչատրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

5) Էդգար Մարտիրոսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի տեղակալ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Անի Ավդալյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



[Handwritten signature]

2025-08-25 14:58:05 GMT+4
Համապատասխան է եղել 9-ի նորմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » օգոստոս 2025 թվականի N 1885-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ
ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անահիտ Հրաչի Գրիգորյանի կողմից Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2025 թվականի հուլիսի 31-ի N 10806 թվագրմամբ դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 20-ին անցկացվել է վարչական վարույթ՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 1569-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով, որի ընթացքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում 2025 թվականի հունվարի 17-ին քաղաքացի Մարիամ Մանուկյանի հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ Վրեժ Գևորգյանի և Գայանե Գևորգյանի անվամբ 2008 թվականի հունիսի 10-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունվել է վարույթ և գտնվում է քննության փուլում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարիամ Մկրտչի Մանուկյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 20-ին N 11984 թվագրմամբ), որոշում եմ.

1. Քաղաքացի Անահիտ Հրաչի Գրիգորյանի 2025 թվականի հուլիսի 31-ի N 10806 թվագրմամբ դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում հարուցված վարչական վարույթը կասեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անահիտ Հրաչի Գրիգորյանին և Մարիամ Մկրտչի Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
2025թ. ք.Գյումրի

2025-08-28 10:41:29 GMT+4
Հասցեված է ԷԿԵԼԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2025 թվականի N 1884-Ա
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ՇԱՀՈՒՄՅԱՆ 56/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարիամ Մարտիրոսյանի 2025 թվականի օգոստոսի 20-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 20-ին 12046-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Մարիամ Մարտիրոսյանին Գյումրի քաղաքի Շահումյան 56/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Մարիամ Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Handwritten signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԶԵ-08-25 11 32 34 ՕՍԿԴ-4
Զեքուված է ԵԿԵՆԴԻ կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » օգոստոս 2025 թվականի N 1883-Ա

<<ՍԱՖԻՆԱ 3>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 5/14 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Սաֆինա 3>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի օգոստոսի 13-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 18-ին 11889-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Սաֆինա 3>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 5/14 հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 13-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Սաֆինա 3>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Քրիստինա Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Handwritten signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. ք. Գյումրի

2025-08-25 10:49:04 GMT+4
Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնք



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոս 2025 թվականի N 1882 Ա
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԴԵԼԻՆԱ ՔԻՇՄԻՇՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ադելինա Քիշմիշյանի 2025 թվականի օգոստոսի 18-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 19-ին 11965-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ադելինա Քիշմիշյանին Գյումրի քաղաքի Սպանդարյան 24 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 18-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ադելինա Քիշմիշյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Handwritten signature

2025-08-19 10:54:32 GMT+4
Հայաստանի Հանրապետության Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» «օգոստոս» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 1881 -Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
«ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 29 ԱՐԶԱՆԱԳՐԱՅԻՆ
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Կիմա Խաչիկի Սարգսյանը (անձնագիր՝ AO0224195, տրված՝ 2025 թվականի մայիսի 22-ին, 065-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի նոյեմբերի 29-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 29 արձանագրային որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 41-րդ կետի 2-րդ ենթակետում Սիրուշ Հովհաննեսի Սարգսյանի անունը «Սիրանուշ»-ի փոխարեն գրվել է «Սիրուշ» (հիմք՝ մահվան վկայական՝ թիվ ԲԲ N 009019, տրված՝ 2025 թվականի հունիսի 23-ին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժնի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 27.1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Կիմա Խաչիկի Սարգսյանի 2025 թվականի օգոստոսի 18-ի դիմումը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 11926 թվագրությամբ), **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի քաղաքային խորհրդի կոմիտեի 1994 թվականի նոյեմբերի 29-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 29 արձանագրային որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 41-րդ կետի 2-րդ ենթակետում «Սիրուշ» բառը փոխարինել «Սիրանուշ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կիմա Խաչիկի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2025թ., ք. Գյումրի

2025-08-22 12:36:27 GMT+4
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » օգոստոս 2025 թվականի N 1880 -Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 06-Ի N 1487-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 06-ի N 1487-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափազորության մեջ տեղ գտած սխալի պատճառով և հիմք՝ ընդունելով ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, ժառանգական գործ N 3559: Ներկայացվել է նոր ճշտգրված չափազորություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հայկազ Ղանդիլյանի 2025 թվականի օգոստոսի 18-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 18-ին 11791-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հայկազ Ղանդիլյանին Գյումրի քաղաքի Բագրատունյաց 6/3 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 3.75 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հայկազ Ղանդիլյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. ք. Գյումրի

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» օգոստոս 2025 թվականի N 1858-Ա

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Էյթիել սերվիսիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի օգոստոսի 05-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 08-ին 11258-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Էյթիել սերվիսիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառներ ընդհանուր 644 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 01-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիել սերվիսիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025 թ. 8. 15:42:26 (թվ.4)
Տպատպանի էլեկ. փոստ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի

ՑՈՒՑԱԿ

**<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ**

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Երևանյան խճ. Արարատ քաղաք	1	18
2	Երևանյան-Գ. Նժդեհ խճ. մ.	1	18
3	Խաղաղության օղակ-Հաղթանակի խճ. մ.	1	18
4	Խրիմյան հայրիկ-Անկաղության խճ. մ.	1	18
5	Խրիմյան հայրիկ-Անկաղության խճ. մ.	1	18
6	Շահումյան փ. 188	1	72
7	Գ. Նժդեհ փող., մարզպետարանի դիմաց	2	36
8	Գ. Նժդեհ փող. 2-րդ դպրոցի հարևանությամբ	1	18
9	Սայաթ-Նովա փ. Ծաղկի խանութի հարևանությամբ	1	18
10	Սայաթ-Նովա փ.	20	50
11	Գ. Նժդեհ փող Գյումրի հյուրանոցի դիմաց	2	36
12	Գ. Նժդեհ փող. Իսուգ հյուրանոցի դիմաց	1	18
13	Գ. Նժդեհ փող. 5/17	2	36
14	Սայաթ-Նովա 5/2	2	36
15	Տիգրան Մեծ փ. 35/4	1	18
16	Պ. Սևակ 2	1	18
17	Շահումյան փ. 188	1	18
18	Պ. Սևակ 9	2	36
19	Գ. Նժդեհ 1	1	18
20	Գ. Նժդեհ 1	1	18
21	Պողոսյան-Գ. Նժդեհ հրապ.	1	18
22	Ալ. Մանուկյան փ. 21	1	18
23	Սայաթ-Նովա 6/1	2	36
24	Մյասնիկյան 70	2	36
	ԸՆԴԱՄԵՆՆԸ	50	644



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » օգոստոս 2025 թվականի N 1857-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀՐԻՃ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿՇԻՆ
3 ԲԱՆԱՎԱՆ ՄՈՂՈՒԼ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահրիճ Սարգսյանի 2025 թվականի օգոստոսի 13-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 13-ին 11531-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վահրիճ Սարգսյանին Գյումրի քաղաքի Շիրակշին 3 բանավան մոդուլ 18 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 13-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վահրիճ Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



2025-08-21 17:49:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» օգոստոս 2025 թվականի N 1856 Ա

**<<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի օգոստոսի 05-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 08-ին 11269-2025 թվագրմամբ)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պատասխաններ ընդհանուր 283.68 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 01-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Handwritten signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-08-21 16:03:14 GMT+4
Հասցեագրված է ԵԿԵՆ Գ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



Հավելված

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար

2025 թ. 22-րդ օգոստոսի
N 1857-Ն որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԻԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Մ. Խորենացի փ. -Մայիսյան խչմ.	2	36
2	Շիրակի փող. խաղաղության հրապ.	1	18
3	Գորկու փող. Թիմի դիմաց	1	18
4	Գորկու փող. Թիմի դիմաց	1	18
5	Մայաթ-Նովա փ. Ակադեմիայի դիմաց	1	18
6	Մայաթ-Նովա փ. Ակադեմիայի դիմաց	1	18
7	Մայաթ-Նովա փ.	2	36
8	Մայաթ-Նովա փ. 8	1	18
9	Ռիժկովի փողոց 20 Սքրոլեր	40	86.4
10	Վարդանանց հրապ. 4 Սքրոլեր	8	17.28
	ԸՆԴԱՄԵՆՆԸ	58	283.68



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» Օգոստոս 2025 թվականի N 1855-Ա
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 9/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սերգեյ Գրիգորյանի 2025 թվականի օգոստոսի 11-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 11-ին 11420-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սերգեյ Գրիգորյանին Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան 9/4 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 11-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սերգեյ Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025.08.20 16:33 GMT+4
Հրապարակված է ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՅԻՆ ՍԵՐՎԻՍԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԸ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» օգոստոս 2025 թվականի № 1854-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա.
ՍՊԵՆԴԻԱՐՈՎԻ ՓՈՂՈՑԻ 7/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 144,97
ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1146-
0111-ԻԳ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Սպենդիարովի փողոցի 7/1 հասցեի հողամասի հարևանությամբ գտնվող 144,97 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1146-0111-ից) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Սպենդիարովի փողոց, 7/4 հողամաս



Handwritten signature

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

2025-08-21 15:39:47 GMT+4
Հավաստված է ԷԿԵԼԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» օգոստոս 2025 թվականի №1853-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի №868-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 12-ի №868-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1. Նախաբանից առաջ նոր պարբերությունից լրացնել «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԳԱՅԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 14 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերը և թվերը:



[Signature]

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՂԵՏ

2025-06-21 15:55:40 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոս 2025 թվական N 1852 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԱՐԼԻԿ
ԽԱԶԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԼԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ,
ՍՏԵԼԼԱ ՄԱՐԼԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Մարիկ Խաչիկի Հարությունյանը (անձնագիր՝ AP 0549690, տրված՝ 2016թվականի սեպտեմբերի 7-ին 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Կազաչի պոստ 241 դոս 14 հասցեում), 2025 թվականի հունիսի 9-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով քաղաք Գյումրի Կազաչի պոստ 241 դոս № 14 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2005թվականի հուլիսի 29-ի №1579 որոշմամբ քաղաք Գյումրի Կազաչի պոստ 241 դոս №14 բնակարանը հատկացվել է քաղաքացի Մարիկ Հարությունյանի 5 անձից բաղկացած ընտանիքին (իրեն, կնոջը, տղային, 2աղջկան) և տրվել №14 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2005թվականի հուլիսի 29-ի №1579 որոշմամբ տրված №14 միասնական օրդերը, 2025 թվականի ապրիլի 30-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 250163016035, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի ապրիլի 25-ի տեղեկանքները, Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի ապրիլի 25-ի եզրակացությունը, Միսակ Մարիկի Հարությունյանի լիազորագիրը Գյումրի համայնքի Կազաչի պոստ 241 շենք №14 հասցեի բնակարանի իրեն հասանելիք բաժնեմասի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Մարիկ Խաչիկի Հարությունյանին լիազորելու վերաբերյալ, Մարիկ Խաչիկի Հարությունյանի, Օքսաննա Պետրովնա Դուրմանովայի, Սուսաննա Մարիկի Հարությունյանի, Ստելլա Մարիկի Հարությունյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա

որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի հունիսի 9-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լուսմների օր է նշանակվել 2025 թվականի օգոստոսի 12-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լուսմների օրվա, ժամի և վայրի մասին:

Լուսմներն իրականացվել են քաղաքացի՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 241 շենք, № 14 հասցեի 63.28 (վաթսուներեք ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ № 08072025-08-0021 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 241 դոս № 14 հասցեի բնակարանը 2005 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հուլիսի 29-ի № 1579 որոշմամբ տրված № 14 միասնական օրդեր):

գ) Գյումրի քաղաք, Կազաչի պոստ 241 շենք, № 14 բնակարան հասցեագրությամբ 63.28 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կազաչի պոստ թաղամաս, 241 շենք, 14 բնակարան:

դ) Շիրակ Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 241 շենք 14 հասցեում հաշվառված է 6 անձ, բնակվում է 5 անձ (հիմք՝ 2025 թվականի ապրիլի 30-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 250163016035, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի ապրիլի 25-ի տեղեկանքներ):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանի, Սուսաննա Մարիկի Հարությունյանի, Ստելլա Մարիկի Հարությունյանի, անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված չէ: Քաղաքացի Օքսաննա Պետրովնա Դուրմանովայի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 197 շենք, 1 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 197 շենք, 1 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 29-ի N ԱՏ-29042025-99-0275, ԱՏ-29042025-99-0190, ԱՏ-29042025-99-0274, 2025 թվականի ապրիլի 28-ի N ԱՏ-28042025-99-0098 տեղեկանքներ):

զ) Գյումրու Կազաչի Պոստ ԴՈՍ 241 բազմաբնակարան շենքի 14 բնակարանի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, մաշվածությունը՝ 30 տոկոս (հիմք՝ Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի ապրիլի 25-ի եզրակացություն):

ը) Քաղաքացի՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 241 դոս № 14 հասցեի բնակարանը վարձակալել է 2005 թվականի հուլիսի 29-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած

բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)՝ 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալված բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998

թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի՝ Միսակ Մարիկի Հարությունյանը հանդիսանում է ՌԴ քաղաքացի:

Քաղաքացի Օքսաննա Պետրովնա Դուրմանովայի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Կազաչի պոստ թաղամաս 197 շենք, 1բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է

Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետը՝ վարչական մարմինը քաղաքացի՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանի դիմումը բավարարեց մասամբ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի, 55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 241 շենք, № 14 հասցեի 63.28 (վաթսուներեք ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

- | | |
|------------------------------------|----------------------|
| 1) Մարիկ Խաչիկի Հարությունյանին | ծնված 1952 թվականին, |
| 2) Սուսաննա Մարիկի Հարությունյանին | ծնված 1997 թվականին, |
| 3) Ստելլա Մարիկի Հարությունյանին | ծնված 1999 թվականին |

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

- Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանին, Սուսաննա Մարիկի Հարությունյանին, Ստելլա Մարիկի Հարությունյանին:
- Քաղաքացիներ՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանին, Սուսաննա Մարիկի Հարությունյանին, Ստելլա Մարիկի Հարությունյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Մարիկ Խաչիկի Հարությունյանին, Սուսաննա Մարիկի Հարությունյանին, Ստելլա Մարիկի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝



Handwritten signature

2025-08-20 16:28:53 GMT+4
Հավաստված է էլեկտրոնային կոդով

mlD

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թվական քաղաք Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » օգոստոս 2025 թվական N 1851- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 978-Ա ՈՐՈՇՈՒՄԸ
ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էդուարդ Ժորայի Սարգսյանը (անձնագիր՝ AT 0243810, տրված՝ 2019 թվականի օգոստոսի 6-ին, 064-ի կողմից, հաշվառված ք. Գյումրի Շահումյան 188ա շենք 35 հասցեում), 2025 թվականի մայիսի 12 -ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին խնդրելով՝ ընթացք տալ ՎԴ 5/0132/05/19 վարչական գործով վարչական դատարանի կողմից 2021 թվականի հունիսի 30-ին կայացված վճռին:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 30-ի վճռի պատճենը, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի հունիսի 15-ի վճռի պատճենը, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին և Կարինե Հրանտի Զուլֆալյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 27-ի N 978-Ա որոշման պատճենը, քաղաքացի Էդուարդ Ժորայի Սարգսյանի նույնականացման քարտի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 14-րդ, 19-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2025 թվականի մայիսի 12-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի օգոստոսի 12-ը, դիմումատուն և Սպարտակ Ստյոպայի Սարգսյանը, Կարինե Հրանտի Զուլֆալյանը պատշաճ կարգով ծանուցվել են լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Էդուարդ Ժորայի Սարգսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները.

ա) Գյումրի համայնքի Շահումյան փողոց 188ա շենք N 35 հասցեի բնակարանը

նվիրատվության եղանակով օտարվել է քաղաքացիներ՝ Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին և Կարինե Հրանտի Ջուլֆակյանին (հիմք՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին և Կարինե Հրանտի Ջուլֆակյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 27-ի № 978-Ա որոշում):

բ) 2021 թվականի հունիսի 30-ի դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ Էդուարդ Ժորայի Սարգսյանի հայցի՝ ընդդեմ Գյումրու համայնքապետարանի, երրորդ անձինք՝ Սպարտակ Ստյոպայի Սարգսյան, Կարինե Հրանտի Ջուլֆակյան, Աշոտ Արամի Մարտիրոսյան, Անահիտ Վազգենի Մարտիրոսյան՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 27-ի № 978-Ա որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու, այն է՝ Գյումրու քաղաքապետարանի և Սպարտակ Ստյոպայի Սարգսյանի, Կարինե Հրանտի Ջուլֆակյանի միջև կնքված 2019 թվականի հունիսի 13-ի № 6602 նվիրատվության պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջների մասին վճռեց. (մեջբերում). Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 27-ին կայացված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ՝ Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին և Կարինե Հրանտի Ջուլֆակյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» № 978-Ա որոշումը, որպես անվավերության հետևանք՝ Գյումրու համայնքապետարանի և Սպարտակ Ստյոպայի Սարգսյանի, Կարինե Հրանտի Ջուլֆակյանի միջև կնքված 2019 թվականի հունիսի 3-ի № 6602 նվիրատվության պայմանագիրը ճանաչել անվավեր (մեջբերման ավարտը):

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություն և արձակում կարգադրություններ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Վերոշարադրյալի հիման վրա, ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջի՝ անհրաժեշտ է քաղաքացի՝ Էդուարդ Ժորայի Սարգսյանի խնդրանքը բավարարել:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 14-րդ, 19-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Անվավեր ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 27-ին կայացված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիներ՝ Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին և Կարինե Հրանտի Ջուլֆակյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» № 978-Ա որոշումը:

2. Քաղաքացիներ՝ Էդուարդ Ժորայի Սարգսյանին, Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին, Կարինե Հրանտի Զուլֆալյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Էդուարդ Ժորայի Սարգսյանին, Սպարտակ Ստյոպայի Սարգսյանին, Կարինե Հրանտի Զուլֆալյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝



2025-08-20 15:49:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թվական քաղաք Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոս 2025 թվական N 1850-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ
ԱՐՄԵՆԱԿ ՍԵՓԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ, ՆԱՐԵԿ ԱՐՄԵՆԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ,
ՔԱԶԻԿ ԱՐՄԵՆԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Հրանուշ Աքիլեսի Դիլոյանը (նույնականացման քարտ՝ 010104305, տրված՝ 2017 թվականի դեկտեմբերի 9-ին 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Ղանդիլյան փողոց 23 շենք, 4 հասցեում), 2025 թվականի փետրվարի 12-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Ղանդիլյան փողոց 23 շենք № 4 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի Շ-2478 գրությունը, 2024 թվականի նոյեմբերի 8-ի Գյումրի 2 բաժնի N 94/20-1996 գրությունը, «Երազանք» համատիրության 2025 թվականի հունվարի 15-ի տեղեկանքը, 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Մուրադ Տիգրանյան» անհատական ձեռնարկության տեղեկանքը, 2024 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության տեղեկանքը, Արմենակ Ստեփանի Այվազյանի անձնագրի, Հրանուշ Աքիլեսի Դիլոյանի նույնականացման քարտի պատճենները, Քաջիկ Արմենակ Այվազյանի, Նարեկ Արմենակ Այվազյանի ծննդյան վկայականների պատճենները, Արմենակ Ստեփանի Այվազյանի լիազորագիրը Գյումրի համայնքի Ղանդիլյան փողոց 23 շենք № 4 հասցեի բնակարանի իրեն հասանելիք բաժնեմասի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Հրանուշ Աքիլեսի Դիլոյանին լիազորելու վերաբերյալ, Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 21-ի № 97-Ա հասցեավորման որոշումը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-

Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի փետրվարի 12-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի օգոստոսի 12-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Հրանուշ Աբիլեսի Դիլոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Հ.Ղանդիլյան փողոց 1-ին նրբանցք 23 շենք, 4/1 հասցեի 51.16 (հիսունմեկ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 19022025-08-0041 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Ղանդիլյան փողոցի N° 23 ֆոնդի տան որոշումները չեն պահպանվել, հետևաբար վերոնշյալ ֆոնդի N°4 բնակարանի հատկացման վերաբերյալ տեղեկատվություն չկա (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի Շ-2478 գրություն):

գ) Քաղաք Գյումրի Ղանդիլյան փողոց 23 շենք 4 հասցեում հաշվառված բնակվում են՝ Արմենակ Ստեփանի Այվազյանը 2013 թվականից, Հրանուշ Աբիլեսի Դիլոյանը 2021 թվականից, Քաջիկ Արմենակի Այվազյանը 2021 թվականից, Նարեկ Արմենակի Այվազյանը 2021 թվականից (հիմք՝ 2024 թվականի նոյեմբերի 8-ի Գյումրի 2 բաժնի 94/20-1996 գրություն, «Երազանք» համատիրության 2025 թվականի հունվարի 15-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ՝ Արմենակ Ստեփանի Այվազյանի, Քաջիկ Արմենակի Այվազյանի, Նարեկ Արմենակի Այվազյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Քաղաքացի Հրանուշ Աբիլեսի Դիլոյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Մուշ-2 թաղամաս 4/25 շենք 7 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի Մուշ-2 թաղամաս 4/25 շենք 7 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 1-ի N ԱՏ-01112024-99-0317, 2024 թվականի հոկտեմբերի 9-ի N ԱՏ-09102024-99-0387 տեղեկանքներ):

ե) Շիրակի մարզ, Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 23 շենք, թիվ 4 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երրորդ աստիճան, (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2024 թվականի սեպտեմբերի 25-ի տեղեկանք):

զ) Քաղաքացի Աբիլես Դիլոյանը /քաղաք Գյումրի, Ղանդիլյան փողոց 23 շենք 4 բնակարան/ Գյումրի էլեկտրական ցանցում հանդիսանում է բաժանորդ 1997 թվականից մինչև օրս /հիմք՝ «Էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2024 թվականի նոյեմբերի 7-ի տեղեկանք/:

է) Գյումրի քաղաք, Հ.Ղանդիլյան փողոց, 23 շենք 4 բնակարան հասցեագրությամբ հաշվառած 51.16 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու համար տրամադրվել է հասցե՝ Շիրակի մարզ, Գյումրի ք. Հ.Ղանդիլյան փողոց, 1-ին նրբանցք, 23 շենք, 4/1 բնակարան:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում է համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատերն ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացի՝ Հրանուշ Աբիլեսի Դիլոյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի Մուշ-2 թաղամաս 4/25 շենք 7 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի Մուշ-2 թաղամաս 4/25 շենք 7 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ ուստի՝ վարչական մարմինը քաղաքացի Հրանուշ Աբիլեսի Դիլոյանի դիմումը մերժեց:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 7-րդ, 9-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի, 54-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի Հ.Ղանդիլյան փողոց 1-ին նրբանցք 23 շենք, 4/1 հասցեի բնակարանը քաղաքացի՝ Հրանուշ Աքիլեսի Դիլոյանին և իր ընտանիքին՝ Արմենակ Ստեփանի Այվազյանին, Քաջիկ Արմենակ Այվազյանին, Նարեկ Արմենակ Այվազյանին նվիրատվության եղանակով օտարելու վերաբերյալ դիմումը մերժել:
- 2 Քաղաքացիներ՝ Հրանուշ Աքիլեսի Դիլոյանին՝ Արմենակ Ստեփանի Այվազյանին, Քաջիկ Արմենակ Այվազյանին, Նարեկ Արմենակ Այվազյանին եռօրյան ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնում քաղաքացիներ՝ Հրանուշ Աքիլեսի Դիլոյանին՝ Արմենակ Ստեփանի Այվազյանին, Քաջիկ Արմենակ Այվազյանին, Նարեկ Արմենակ Այվազյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝



2025-08-20 16:34:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թվական քաղաք Գյումրի